# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրի մասին

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների համար վագոնների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԲՄԾՁԲ-26/45 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին տեղեկատվությունը՝

| չափաբաժնի համարը | Գնման առարկայի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | չափման միավորը | քանակը | | Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/ | | համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) | պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) |
| | | | առկա ֆինանսական միջոցներով | ընդհանուր | առկա ֆինանսական միջոցներով | ընդհանուր | | |
| 1-ին | Մետրոպոլիտենի 81-714 մոդելի վագոնների կապիտալ վերանորոգման և արդիականացման ծառայություն | դրամ | - | 1 | - | 600,000,000.00 | Մետրոպոլիտենի 81-714 մոդելի թվով 3 վագոնների կապիտալ վերանորոգման եվ արդիականացման ծառայություն համաձայն Հավելված 1.1-ի և կից ներկայացված լուսանկարների: | Մետրոպոլիտենի 81-714 մոդելի թվով 3 վագոնների կապիտալ վերանորոգման եվ արդիականացման ծառայություն համաձայն Հավելված 1.1-ի և կից ներկայացված լուսանկարների: |

| | |
|---|---|
| **Կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը** | Գնման ձև է հանդիսանում բաց մրցույթը, համաձայն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը |

| | | | |
|---|---|---|---|
| **Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը** | | 08.05.2026թ. | |
| **Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը** | 1 | - | |
| **Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը** | | **Հարցարդման ստացման** | **Պարզաբանման** |
| | 1 | - | - |

| Չ/հ | Մասնակցի անվանումը | Յուրաքանչյուր մասնակցի հայտով, ներառյալ միաժամանակյա բանակցությունների կազմակերպման արդյունքում ներկայացված գինը/ՀՀ դրամ | | |
|---|---|---|---|---|
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր |
| 1-ին | «Երվադա» ՍՊԸ | 456,500,000.00 | 91,300,000.00 | 547,800,000.00 |
| | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ | 499,954,750.00 | 99,990,950.00 | 599,945,700.00 |

**Տվյալներ մերժված հայտերի մասին**

| Չ/հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքները (բավարար կամ անբավարար) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը | Հայտով ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին | Առաջարկած գնման առարկայի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին | Գնային առաջարկ |
| - | - | - | - | - | - |

| | |
|---|---|
| **Այլ տեղեկություններ** | **Ծանոթություն՝** Հայտերի մերժման այլ հիմքեր. |
| | **Մերժված հայտեր չկան:** |

| | | |
|---|---|---|
| **Ընտրված մասնակցի որոշման ամսաթիվը** | 15.06.2026թ. | |
| **Անգործության ժամկետ** | **Անգործության ժամկետի սկիզբ** | **Անգործության ժամկետի ավարտ** |
| | 15.06.2026թ. | 25.06.2025թ. |
| **Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման ամսաթիվը** | 01.07.2026թ. | |
| **Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվելու ամսաթիվը** | 06.07.2026թ. | |
| **Պատվիրատուի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթիվը** | 07.07.2026թ. | |

| Չ/հ | Ընտրված մասնակիցը | Պայմանագրի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պայմանագրի համարը | Կնքման ամսաթիվը | Կատարման վերջնա-ժամկետը | Կանխավճարի չափը | Գինը ՀՀ դրամ | |
| | | | | | | Առկա ֆինանսական | Ընդհանուր |

| | | | | | | միջոցներով | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1-ին | «Երվադա» ՍՊԸ | ԵՄ-ԲՄԾՁԲ-26/45 | 07.07.2026թ. | Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և մատուցումը իրականացվելու է 180 օրացուցային օրվա ընթացքում: | - | - | 547,800,000.00 |

| **Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Հ/հ** | **Ընտրված մասնակիցը** | **Հասցե, հեռ.** | **Էլ.-փոստ** | **Բանկային հաշիվը** | **ՀՎՀՀ / Անձնագրի համարը և սերիան** |
| 1-ին | «Երվադա» ՍՊԸ | Ք. Երևան Արցախի 28/15, 033717777 | ervada@mail.ru | 1570005353830100 | 02231092 |

| | |
|---|---|
| **Այլ տեղեկություններ** | **Ծանոթություն՝** Որևէ չափաբաժնի չկայացման դեպքում պատվիրատուն պարտավոր է լրացնել տեղեկություններ չկայացման վերաբերյալ:<br>**Ընթացակարգը կայացել է:** |

**Սույն ընթացակարգի տվյալ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակիցները կարող են ընթացակարգը կազմակերպած պատվիրատուին ներկայացնել կնքված պայմանագրի տվյալ չափաբաժնի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման (մասնագիտական խմբի) հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ՝ սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո 3 օրացուցային օրվա ընթացքում:**
**Գրավոր պահանջին կից մասնակիցների կողմից ներկայացվում է՝**
**1) ֆիզիկական անձին տրամադրված լիազորագրի բնօրինակը: Ընդ որում լիազորված՝**
**ա. ֆիզիկական անձանց քանակը չի կարող գերազանցել երկուսը.**
**բ. ֆիզիկական անձը անձամբ պետք է կատարի այն գործողությունները, որոնց համար լիազորված է.**
**2) ինչպես գործընթացին մասնակցելու պահանջ ներկայացրած, այնպես էլ լիազորված ֆիզիկական անձանց կողմից ստորագրված բնօրինակ հայտարարություններ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված շահերի բախման բացակայության մասին.**
**3) այն էլեկտրոնային փոստի հասցեները և հեռախոսահամարները, որոնց միջոցով պատվիրատուն կարող է կապ հաստատել պահանջը ներկայացրած անձի և վերջինիս կողմից լիազորված ֆիզիկական անձի հետ:**
**Լիազորված մարմնի կողմից վարվող ցուցակում ընդգրկված՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, լրատվական գործունեություն իրականացնող անձինք կամ վերջիններիս ներկայացուցիչները (այսուհետ՝ դիտորդներ) պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացի օրվա, ժամի ու վայրի մասին կարող են տեղեկանալ պատասխանատու ստորաբաժանումից (մասնագիտական խմբից)՝ հեռախոսով կամ գրավոր հարցումն ուղարկելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գրավոր հարցումը ստանալու պահին դեռևս հայտնի չեն ընդունման գործընթացի օրը, ժամն ու վայրը, ապա այդ տեղեկատվությունը տրամադրվում է հայտարարության մեջ նշված ժամկետը լրանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:**
**Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեն է՝ sargsyan1982@gmail.com, հեռախոսահամարն է՝ +374 33 89 10 89:**

| | |
|---|---|
| **Մասնակիցների ներգրավման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները** | Մասնակիցների ներգրավման նպատակով իրականացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված հրապարակումները www.armeps.am և www.gnumner.am կայքերում: |
| | |
| **Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը** | Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել: |
| | |
| **Գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները** | Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել: |
| | |
| **Այլ անհրաժեշտ տեղեկություններ** | Բացակայում են: |

| **Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող** | | |
|---|---|---|
| **Անուն, Ազգանուն** | **Հեռախոս** | **Էլ. փոստի հասցեն** |
| Վ. Էլյան | +374 98389689 (ներքին հեռախոսահամար՝ 13) | a.hovhannisyan@promotion.am |

*Հավելված N 1.1*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**Մետրոպոլիտենի 81-714 մոդելի վագոնների կապիտալ վերանորոգման եվ արդիականացման ծառայության**

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

– «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն («Պատվիրատու») Երևան քաղաքում գործող ձեռնարկություն է, որի նպատակն է տրանսպորտային ծառայություններ մատուցել ավելի քան 1,1 մլն բնակչություն ունեցող քաղաքին:

Ընդհանուր առմամբ, մետրոպոլիտենի վագոնները հին են և մաշված: Կապիտալ վերանորոգման և արդիականացման ենթակա վագոնների հիմնական խնդիրները հետևյալն են (ոչ ամբողջական ցանկ).

- թափքի և կրող կոնստրուկցիաների շահագործական ռեսուրսը սպառված է;
- կառավարման սարքավորումների շահագործական ռեսուրսը սպառված է;
- էլեկտրական սարքավորումների մեծ մասի շահագործական ռեսուրսը սպառված է;
- մետրոպոլիտենի վագոններում առանձին հանգույցների, համալրող մասերի, դետալների, մալուխների, լարերի և այլնի պակաս կա;
- ուղևորների հարմարավետության մակարդակը անբավարար է;
- մետրոպոլիտենի վագոններում իրակայուն նյութերի պակաս կա:

Այսպիսով, Պատվիրատուն առաջարկում է իրականացնել վագոնների կապիտալ վերանորոգում և արդիականացում՝ հետևյալ հիմնական նպատակներին հասնելու համար.

- վագոնի շահագործական ռեսուրսի վերականգնում;
- վագոնի շահագործման ընթացքում անհրաժեշտ անվտանգության մակարդակի ապահովում;
- շահագործման և էներգետիկ ծախսերի նվազեցում;
- ուղևորների անվտանգության և հարմարավետության մակարդակի բարձրացում;

Պատվիրատուն Կատարողին ապահովում է համապատասխան աշխատանքային հարթակով Երևանի մետրոպոլիտենի դեպոյի տարածքում, որը կահավորված է 30 տ բեռնատարողությամբ դոմկրատներով, մինչև 8 մթնոլորտ սեղմված օդով, էլեկտրաէներգիայով և աշխատանքային զննման խրամուղով:

Կատարողից պահանջվում է (ոչ ամբողջական ցանկ).

- իրականացնել 81-714 մոդելի վագոնի կապիտալ վեր անորոգում և արդիականացում;
- տեղադրել պակասող կայանքները, համապատասխան սարքավորումները, համալրող մասերը, մալուխները, լարերը և այլն՝ ապահովելով վագոնի ամբողջական համալրումը;
- իրականացնել ուղևորասրահի կապիտալ վերանորոգում և արդիականացում;
- իրականացնել ուղևորասրահի սահող դռների կապիտալ վերանորոգում՝ պնևմատիկ դռնային գլանները փոխարինելով ժամանակակիցներով;
- արդիականացնել ուղևորասրահի լուսավորության համակարգը;
- կիրառել ներկման նոր համակարգ մետրոպոլիտենի վագոնի թափքի ինտերիերի (սրահի) և էքստերիերի համար:

Պատվիրատուն Կատարողին կտրամադրի համալրված վագոն, ինչպես նաև սայլակների նոր շրջանակներ և դրանց համար անվազույգեր:

Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին հանձնել արդիականացման արդյունքում փոխարինված սարքավորումներն ու սարքերը, ինչպես նաև այդ արդյունքում առաջացած մետաղաջարդոնը:

Մետրոպոլիտենի վագոնների կապիտալ վերանորոգումը պետք է կատարվի Ц.Метро-4592 «Մետրոպոլիտենի վագոն. վերանորոգման ձեռնարկ» հրահանգի համաձայն:

Վագոնների արդիականացումը պետք է իրականացվի այն ծավալով և կատարմամբ, որը հնարավորություն կտա վագոնը ներառել մետրոպոլիտենի նախկինում արդիականացված վագոնների կազմում և երաշխավորված շահագործել:

## 2. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Կատարողը պետք է ներկայացնի տեխնիկական փաստաթղթեր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով՝ ներառյալ տեխնիկական պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը, շահագործման և տեխնիկական սպասարկման ձեռնարկները:

## 3. ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կատարողը պարտավորվում է կատարել շարքից դուրս եկած հիմնական հանգույցների, դետալների, համալրող արտադրատեսակների և հավաքական միավորների (էլեկտրոնկոմպրեսոր, ՌՆՏ, ՌՊՏ, ԴԻՊ-01 և այլն) երաշխիքային սպասարկում, վերանորոգում և փոխարինում՝ 100 000 կմ վազքի կամ բոլոր աշխատանքների ավարտից հետո 1 տարվա ընթացքում՝ Պատվիրատուի կողմից վագոնի տեխնիկական շահագործման, վերանորոգման և սպասարկման կանոնների պահպանման պայմանով:

## 4. ՊԱՀԱՆՋՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

- ➢ Վագոնների էլեկտրական, էլեկտրոնային և պնևմատիկ համակարգերի արդիականացում այն նպատակով, որպեսզի դրանք համապատասխանեն Երևանի մետրոպոլիտենի նախկինում արդիականացված վագոնների էլեկտրական, էլեկտրոնային և պնևմատիկ համակարգերին;
- ➢ Էլեկտրակոնտակտային արկղի լարերի մոնտաժը անհրաժեշտ է համապատասխանեցնել Երևանի մետրոպոլիտենի նախկինում արդիականացված վագոնների էլեկտրակոնտակտային արկղերին, ինչպես նաև էլեկտրասարքավորումների բոլոր լարերին, և տեղադրել կառավարման ավտոմատ կոնտակտորների նոր բլոկ:

➢ Պետք է կատարվեն նաև սույն ՏԱ-ի (տեխնիկական առաջադրանք) «Հավելված 1. Լրացուցիչ աշխատանքների ցանկ»-ում նկարագրված բոլոր աշխատանքները;

➢ Վագոնները անհրաժեշտ է համալրել հետևյալ պահեստամասերով:

3 (երեք) միջանկյալ վագոնների համար նախատեսված բաղադրիչների աղյուսակ

| № | Անվանում | Չափ. միավ. | Քանակ |
|---|---|---|---|
| *1* | Գծային կոնտակտորներ ԼԿ (կապիտալ վերանորոգումից հետո) | լրակազմ | 3 |
| *2* | Ռելեների արկղ ЯР-13 (կապիտալ վերանորոգումից հետո) | հատ | 3 |
| *3* | Կոնտակտորի արկղ ЯК-37 (կապիտալ վերանորոգումից հետո) | հատ | 3 |
| *4* | Ապահովիչների արկղ ЯП-57 (կապիտալ վերանորոգումից հետո) | հատ | 3 |
| *5* | Ռևերսոր ՊՌ-772 | հատ | 3 |
| *6* | Ճնշման կարգավորիչ | հատ | 3 |
| *7* | Հողանցման սարք | հատ | 12 |
| *8* | Ինդուկտիվ շունտ ИШ-15 АУ-2 2 ТД 710.042 | հատ | 3 |

«Հավելված 1»

**3 (երեք) միջանկյալ վագոնների համար լրացուցիչ աշխատանքների ցանկ**

| № | Անվանում | Չափ. միավ. | Քանակ |
|---|---|---|---|
| *1* | Տեղադրել եռակոնտակտ անջատիչ կուտակիչ մարտկոցների համար | հատ | 3 |
| *2* | Տեղադրել նոր գելային կուտակիչ մարտկոցներ՝ 12 Վ, 100 Աժ (յուրաքանչյուր վագոնի համար 6 հատ) | հատ | 18 |
| *3* | Տեղադրել էլեկտրոնային լարման կարգավորիչ | հատ | 3 |
| *4* | Տեղադրել էլեկտրոնային դիրքերի փոխանջատիչ | հատ | 3 |
| *5* | Տեղադրել քարշային շարժիչների դաշտի էլեկտրոնային կարգավորիչ | հատ | 3 |
| *6* | Տեղադրել քարշային շարժաբերի կառավարման նոր բլոկ | հատ | 3 |
| *7* | Տեղադրել էլեկտրական կոնտակտորների համար «ՅԱԿ-37» արդիականացված արկղ | հատ | 3 |
| *8* | Տեղադրել նոր փոքրաչափ ռելեներով «ՅԱՌ-13» արդիականացված արկղ | հատ | 3 |
| *9* | Տեղադրել գործարկման-արգելակման դիմադրությունների արդիականացված արկղ | հատ | 3 |
| *10* | Ուղևորասրահի հատակը ծածկել դժվարավառ, բարձրորակ լինոլեումով (մեկ վագոնի հատակի մակերեսը՝ 45 մ$^2$) | մ$^2$ | 135 |
| *11* | Ուղևորասրահում տեղադրել ժամանակակից լուսադիոդային լուսավորության գիծ, որն ապահովում է հավասարաչափ լուսավորություն ամբողջ սրահի երկարությամբ | հատ | 33 |
| *12* | Վագոնի թափքը ներկել բարձրորակ ներկով | կգ | 120 |
| *13* | Տեղադրել նոր չափիչ սարքեր - | | |
| *13.1* | 1000 Վ կիլովոլտմետր | հատ | 3 |
| *13.2* | 100 Վ վոլտմետր | հատ | 3 |
| *13.3* | 500 Ա ամպերմետր | հատ | 6 |
| *13.4* | 100 Ա ամպերմետր | հատ | 3 |
| *13.5* | Արգելակային մանոմետր | հատ | 3 |
| *13.6* | Երկու մագիստրալի մանոմետր | հատ | 3 |
| *13.7* | Դռնային մագիստրալների մանոմետր | հատ | 3 |
| *14* | Տեղադրել կապիտալ վերանորոգված ԷԿ 4Բ-Մ էլեկտրակոմպրեսոր | հատ | 3 |

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

1. Կապալառուն պետք է թարմացնի, վերանորոգի և արդիականացնի ուղևորասրահը:

1.1. ՆՍՏԱՏԵՂԵՐ

*1.1.1.* Պետք է մոնտաժվեն նոր ուղևորային նստատեղեր: Հին բազմատեղ նստարանները պետք է հեռացվեն: Սակայն գոյություն ունեցող պողպատե շրջանակները, հենարանները և սահմանափակող ծայրային վահանակները չպետք է հեռացվեն:

*1.1.2.* Պետք է նախատեսվի առնվազն 48 անհատական նստատեղ և նստատեղերի թիկնակ:

*1.1.3.* Կապալառուն պետք է Գործատուի նախնական հաստատմանը ներկայացնի նստատեղերի տեխնիկական բնութագրերը և տվյալների թերթերը:

*1.1.4.* Նստատեղերը պետք է ապահովեն համապատասխան հարմարավետության մակարդակ, լինեն ամուր, երկարակյաց, ունենան լավ արտաքին տեսք, լինեն դիմացկուն կոշիկների, պայուսակների, ճամպրուկների և այլ իրերի կողմից առաջացող քերծվածքների ու շփման նկատմամբ: Բոլոր նստատեղերը պետք է հեշտ մաքրվեն:

*1.1.5.* Նստատեղերի կառուցվածքում, ներառյալ շրջանակներում, օգտագործվող նյութերը պետք է լինեն ապակեպլաստիկով և պոլիուրեթանով ամրացված: Վահանակային կառուցվածքում օգտագործվող նյութերը պետք է բավարարեն հրդեհային անվտանգության, ծխարտադրության և թունավորության պահանջներին: Նստատեղերը չպետք է պարունակեն փայտե դետալներ:

*1.1.6.* Նստատեղերի միջև բազկակալներ չեն տեղադրվում:

*1.1.7.* Նստատեղերի թիկնակները պետք է նախագծված լինեն այնպես, որ շրջվեն դեպի ներքև՝ ապահովելով մուտք դեպի վահանակի ներսը: Նստատեղերի նստարանը պետք է նախագծված լինի այնպես, որ բացվի դեպի վեր՝ ապահովելով մուտք դեպի նստարանի տակ գտնվող վահանակի ներսը:

*1.1.8.* Նստատեղի կառուցվածքը և դրա հետ կապված դետալները պետք է կարողանան դիմակայել ուղևորների փոխադրման ժամանակ սպասվող բեռներին:

*1.1.9.* Նստատեղերի թիկնակները պետք է լինեն բավականաչափ ամուր՝ ուղևորների անփույթ վերաբերմունքի հետևանքով առաջացող դեֆորմացիաներին դիմակայելու համար: Դրանք պետք է հենվեն նստատեղերի թիկնակի շրջանակին նախապես հաստատված մեթոդով և չպետք է չխկչխկան կամ թմբկահար ձայն արձակեն:

*1.1.10.* Յուրաքանչյուր նստատեղ (նստարան) պետք է լինի փոխարինելի և փոխադարձ փոխարինելի ամբողջ վագոնի բոլոր նստատեղերի հետ:

*1.1.11.* Նստատեղերի փականները պետք է լինեն որակյալ և երկարակյաց, հատուկ բանալիով ապահովեն հեշտ, արագ և հուսալի բացում ու փակում: Միաժամանակ, փականները պետք է առավելագույնս պաշտպանված լինեն դրանց չարտոնված բացման փորձերից:

*1.1.12.* Կապալառուն պետք է Գործատուի նախնական հաստատմանը ներկայացնի նստատեղերի սխեմաները: Սխեմաները պետք է պարունակեն հետևյալը.

- մոնտաժման սխեմաներ գոյություն ունեցող նստատեղերի թիկնակների շրջանակներին և վագոնի թափքին;
- կառուցվածքում օգտագործվող նյութերը;
- չափերը:

1.2. ՈՒՂԵՎՈՐԱՍՐԱՀԻ ՀԱՏԱԿԸ

*1.2.1.* Հատակը պետք է ծածկվի նոր հրակայուն, բարձրորակ լինոլեումով:

*1.2.2.* Հատակի հին ծածկույթը և հին հատակի հիմքի (նրբատախտակի) վնասված հատվածները պետք է ամբողջությամբ փոխարինվեն նորերով:

*1.2.3.* Հատակի նոր ծածկույթը պետք է լինի չսահող և անվտանգ ուղևորների համար թաց վիճակում:

*1.2.4.* Նոր ծածկույթը պետք է լինի անընդհատ ամբողջ ուղևորասրահի մակերեսով՝ առանց բացվածքների կամ անցքերի: Հատակի ծածկույթը պետք է հպվի կողային պատին և փակվի շրիշակներով:

*1.2.5.* Օգտագործվող նյութերը պետք է բավարարեն հրդեհային անվտանգության, ծխարտադրության և թունավորության պահանջներին:

1.3. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

*1.3.1.* Կապալառուն պետք է թարմացնի, կատարի կապիտալ վերանորոգում և արդիականացնի լուսավորության համակարգը լուսադիոդային տարրային բազայի հիման վրա:

*1.3.2.* Ուղևորասրահի ամբողջ լուսավորության համակարգը պետք է համապատասխանի ստանդարտների պահանջներին (առնվազն 150 լյուքս՝ հատակից 0,8 մ և նստատեղի թիկնակից 0,6 մ մակարդակում):

*1.3.3.* Ամբողջ լուսավորությունը պետք է սնուցվի բավարար հզորությամբ կուտակիչ մարտկոցներից՝ վթարային, արտաքին և ներքին լուսավորության աշխատանքն առնվազն չորս ժամ ապահովելու համար:

1.4. ԲՌՆԱԿՆԵՐ ԵՎ ԿԱՆԳՆԱԿՆԵՐ

*1.4.1.* Բռնակների և կանգնակների մակերեսը պետք է վերականգնվի:

*1.4.2.* Ներկման ժամանակ անհրաժեշտ է կիրառել բարձրորակ երկբաղադրիչ ակրիլ-ուրեթանային ներկ՝ ոչ պակաս, քան երեք տարի նվազագույն ծառայության ժամկետով: Գունային գամման նախապես համաձայնեցնել Գործատուի հետ:

1.5. ՈՒՂԵՎՈՐԱՍՐԱՀԻ ՎԱՀԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ

*1.5.1.* Ուղևորասրահում նախատեսվում է հարդարման վնասված վահանակների /պլաստիկատի/ վերանորոգում և ամբողջական փոխարինում նոր տարրերով՝ պատերի, առաստաղի, ծայրային գոտիների և դռների վերևի հատվածների բոլոր ամրացումների, հարմարեցումների և հագեցվածության թարմացմամբ:

*1.5.2.* Կոնստրուկցիան պարտավոր է ապահովել պաշտպանություն կեղտի, փոշու և հեղուկների ներթափանցումից, լինել դիմացկուն ջրի, յուղերի և այլ աղտոտիչների ազդեցության նկատմամբ, ինչպես նաև հեշտությամբ մաքրվել՝ առանց աղտոտումների կուտակման:

*1.5.3.* Հատուկ ուշադրություն է դարձվում անվտանգությանը. օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն հրդեհային անվտանգության, ծխարտադրության և թունավորության պահանջներին:

*1.5.4.* Գունային գամման նախապես համաձայնեցնել Գործատուի հետ:

**2. ՎԱԳՈՆԻ ԹԱՓՔԸ**

2.1 Կապալառուն պետք է վերանորոգի թափքի և տանիքի կրող կոնստրուկցիայի տարրերը: Կոռոզիայի ենթակա տեղերը պետք է փոխարինվեն կամ մաքրվեն մինչև մետաղական փայլ, ապա մշակվեն և ներկվեն բարձրորակ կերպով: Եռակցման աշխատանքների կատարման դեպքում պարտադիր պայման է դեֆեկտոսկոպիայի իրականացումը:

**2.2 Ներկման համակարգ**

*2.2.1* Կապալառուն պետք է ներկի վագոնի թափքի ինտերիերը և էքստերիերը ներկման նոր համակարգով:

*2.2.2* Ներկումը պետք է լինի բարձրորակ՝ երկշերտ ակրիլ-ուրեթանային ներկմամբ, ոչ պակաս, քան երեք տարի նվազագույն ծառայության ժամկետով:

*2.2.3* Ներկման գունային գամման պետք է համաձայնեցվի Գործատուի հետ:

*2.2.4* Ներկման համակարգը պետք է նշվի Գործատուի կողմից պայմանագրի ստորագրումից հետո:

**3. ՈՒՂԵՎՈՐԱՍՐԱՀԻ ԴՌՆԵՐ ԵՎ ՄԻՋՎԱԳՈՆԱՅԻՆ ԴՌՆԵՐ**

3.1 Կապիտալ վերանորոգումը պետք է կատարվի Ц-Метро №4592 հրահանգի համաձայն՝ պնևմատիկ դռնային գլանները փոխարինելով ժամանակակիցներով;

**4. ՈՒԺԱՅԻՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

**4.1 ԲՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

*4.1.1* Կապալառուն պետք է տեղադրի նոր ժամանակակից լրացուցիչ սնուցման աղբյուր:

*4.1.2* Աղբյուրը նախատեսված է հաստատուն հոսանքի 825 Վ կոնտակտային ցանցի լարումը փոխակերպելու համար հաստատուն կայունացված 85 Վ լարման՝ հոսանքի և լարման կարգավորմամբ, և կիրառվում է մետրոպոլիտենի վագոնների բորտային էլեկտրամատակարարման ցանցի սպառողներին սնուցելու և կուտակիչ մարտկոցները լիցքավորելու համար (ոչ պակաս, քան 60 Ա):

4.2 **ՔԱՐՇԱՅԻՆ ԼԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ**

*4.2.1* Կապալառուն պետք է տեղադրի նոր քարշային լարման կարգավորիչ՝ հարկադիր հովացմամբ (24 Վ հաստատուն հոսանքի օդափոխիչ):

*4.2.2* Քարշային լարման կարգավորիչը նախատեսված է մետրոպոլիտենի վագոնների քարշային շարժիչների երկու խմբերի շղթաներում հոսանքի անաստիճան կարգավորման համար՝ ընթացքի և արգելակման ռեժիմներում: Կարգավորիչը 81-714/81-717 մոդելների արդիականացված մետրոպոլիտենի վագոնների էլեկտրասարքավորումների մաս է:

*4.2.3* Կարգավորիչը իրենից ներկայացնում է հաստատուն հոսանքի երկալիք կարգավորիչ, որն ապահովում է քարշային շարժիչների հետ հաջորդաբար միացված գործարկման-արգելակման ռեզիստորների դիմադրության շունտավորումը՝ լայնաիմպուլսային կարգավորմամբ ընթացքի և արգելակման ռեժիմներում:

4.3 ՔԱՐՇԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ

*4.3.1* Կապալառուն պետք է տեղադրի նոր էլեկտրոնային քարշային դաշտի կարգավորիչ:

*4.3.2* Կարգավորիչը նախատեսված է մետրոպոլիտենի վագոնների քարշային շարժիչների երկու խմբերի գրգռման հոսանքի անաստիճան կարգավորման համար՝ ընթացքի և արգելակման ռեժիմներում:

*4.3.3* Կարգավորիչը իրենից ներկայացնում է բարձրացնող տիպի հաստատուն հոսանքի երկալիք կարգավորիչ, որը ներկառուցված է հաջորդական գրգռմամբ 4 քարշային շարժիչ ունեցող մետրոպոլիտենի վագոնի ուժային սխեմայում և ապահովում է հոսանքի փոխակերպումը, որը քարշային էլեկտրաշարժիչի խարսխի հոսանքի և գրգռման փաթույթի հոսանքի տարբերությունն է, այն մուտքային լարման դեպքում, որը հավասար է գրգռման փաթույթի լարմանը, դեպի այն մուտքային հոսանքն ու լարումը, որոնք անհրաժեշտ են ավելցուկային էլեկտրական հզորությունը կլանելու համար հաստատուն շունտային ռեզիստորում՝ (1...2) Օմ դիմադրությամբ և մինչև 4 կՎտ տեղադրված հզորությամբ:

4.4 ՔԱՐՇԱՅԻՆ ՇԱՐԺԱԲԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԼՈԿ

*4.4.1* Կապալառուն պետք է տեղադրի քարշային շարժաբերի կառավարման նոր բլոկ:

*4.4.2* Բլոկը նախատեսված է գնացքային կառավարման մագիստրալից ստացվող ազդանշանների, հոսանքի տվիչների, լարման չափման բլոկից (ԲԻՆ) ստացվող լարման ազդանշանների, ավտոռեժիմի ազդանշանի մշակման և, կախված ստացված մուտքային ազդանշաններից, հատուկ ալգորիթմով արդիականացված 81-714 և 81-717 մոդելների մետրոպոլիտենի վագոնների էլեկտրասարքավորումների համալիրների քարշային էլեկտրաշարժաբերի կառավարման ելքային հրամանների ձևավորման համար:

4.5 «ЯК-37» ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԿՈՆՏԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՐԿՂ

*4.5.1* Կապալառուն պետք է տեղադրի կոնտակտորների համար «ЯК-37» արդիականացված արկղը կամ դրա համարժեքը:

4.6 «ЯР-13» ԱՐԿՂ

*4.6.1* Կապալառուն պետք է տեղադրի նոր փոքրաչափ ռելեներով «ЯР-13» արդիականացված արկղը:

*4.6.2* «ЯР-13» արկղը պետք է տեղադրվի այնպես, որպեսզի ապահովվի հեշտ հասանելիություն և վերանորոգելիություն:

4.7 ԳՈՐԾԱՐԿՄԱՆ-ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԿՂ

*4.7.1* Կապալառուն պետք է տեղադրի գործարկման-արգելակման դիմադրությունների արդիականացված արկղ և ИШ-15У-2 2ТД 710.042 ինդուկտիվ շունտ:

**5.** ՎԱԳՈՆՆԵՐԻ ՍԱՅԼԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

5.1 Գործատուն Կապալառուին է փոխանցում վագոնը կապիտալ վերանորոգում և արդիականացում իրականացնելու համար՝ լիովին համալրված սայլակներով;

5.2 Կապալառուն պետք է տեղադրի սայլակների նոր շրջանակներ և ամբողջական զննություն անցած անվազույգեր, ինչպես նաև կատարի քարշային շարժիչների կապիտալ վերանորոգում՝ «Մետրոպոլիտենների մոտորավագոնային շարժակազմի քարշային և օժանդակ էլեկտրական մեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման կանոններ» Цметро/3896-ի համաձայն:

**6.** ԷԼԵԿՏՐՈԿՈՄՊՐԵՍՈՐ

6.1 Կապալառուն պետք է կատարի ЭК-4Б М տիպի էլեկտրոկոմպրեսորի կապիտալ վերանորոգում:

6.2 Էլեկտրոկոմպրեսորը նախատեսված է մետրոպոլիտենի վագոնների արգելակային համակարգերը և պնևմատիկ սարքերը սեղմված օդով սնուցելու համար:

6.3 Էլեկտրոկոմպրեսորը նախատեսված է հետևյալ պայմաններում աշխատանքի համար.

- շրջակա օդի ջերմաստիճանը՝ մինուս 20°C-ից մինչև պլյուս 40°C;
- օդի հարաբերական խոնավությունը՝ մինչև 80%՝ պլյուս 25°C ջերմաստիճանի դեպքում:

*6.3.1* Կոմպրեսորի ծավալային արտադրողականությունը, ճնշումը, հզորությունը և այլ բնութագրերը ապահովվում են շրջակա օդի պլյուս 25°C ջերմաստիճանի և 0,101 ՄՊա մթնոլորտային ճնշման դեպքում (760 մմ սնդ. սյուն):

**7.** ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

Չի թույլատրվում արտադրատեսակների կազմում օգտագործել նյութեր, որոնք կարող են վտանգ ներկայացնել այդ արտադրատեսակներն օգտագործողների կամ դրանց ազդեցության տակ գտնվող անձանց առողջության համար:

Մասնավորապես, կապարի օգտագործումը որպես համաձուլվածքներում կայունացնող բաղադրիչ չի թույլատրվում: Չի թույլատրվում նաև կապարային հիմքով ներկերի օգտագործումը:

**8.** ՆԵՐԿԵՐ ԵՎ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐ

Յանկացած մեքենաների և մեխանիզմների մետաղական կոնստրուկցիաների մակերեսները (բացի մոնտաժի համար նախատեսված մեքենայացված մակերեսներից և գալվանական ծածկույթ ունեցող մակերեսներից) պետք է ներկվեն կամ մշակվեն հակակոռոզիոն ծածկույթով: Հավաքումից առաջ անհրաժեշտ է նաև ներքին մակերեսների ներկում կամ մշակում կոռոզիայից պաշտպանելու համար:

Սպիտակ ներկը օգտագործվում է այն վահանակների ներքին մասերի համար, որոնք պարունակում են տեխնիկական սպասարկման անձնակազմի կամ մեխանիկների հասանելիությանը ենթակա բաղադրիչներ:

Սարքավորումների նշումները պետք է կատարվեն սպիտակ ներկով:

***Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ***